17.06.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 023296/05
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով 17.06.2021թ. թիվ 23296 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Նաիրա Սաֆարյանը (ՀՎՀՀ՝ 25378657, հասցե՝ ՀՀ ք. Երևան, Մ. Ավետիսյան 1փողոց 51շ., բն. 27) ՀՀ Հարկային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում չի ներկայացրել շահութահարկի 2020թ. տարեկան հաշվարկը, ինչպես նաև <<Կուտակային կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ Հարկային օրենսգրքի 156 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական վճարի տարեկան հաշվարկը, որոնց համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Այն փաստը, որ Կողմը նախկին մեկ տարվա ընթացքում չի ենթարկվել վարչական պատասխանատվության, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33, 244[2] 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Նաիրա Սաֆարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանակել տուգանք 10.000 (տաս հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ STATE REVENUE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականությունը կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվհեմարին. **900005240487**՝ տուգանքի վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը_____